«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Երևանի պետական համալսարանի
ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ֆիզմաթ. գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

_____ Գ.Գ.Գևորգյան
26 մայիսի 2021թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Գոռ Տիգրանի Սարգսյանի «Պետական-մասնավոր գործընկերության արդյունավետ մեխանիզմների ձևավորումը (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Նորարարության տնտեսագիտության ամբիոնի 2021 թվականի մայիսի 24-ի նիստում (արձանագրություն № 5):

Մասնակցում էին՝
Մարկոսյան Աշոտ Խաչատուրի՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, **Դավոյան Սամսոն Աշոտի՝** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, **Ղանթարջյան Սարգիս Լևոնի՝** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, **Մաթևոսյան Էլյանորա Նորայրի՝** տնտեսագիտության թեկնածու, **Դավոյան Աշոտ Սամսոնի՝** տնտեսագիտության թեկնածու, **Ասրյան Լիլիթ Մերուժանի՝** ավագ լաբորանտ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պետություն - մասնավոր հատված գործընկերության (այսուհետ՝ ՊՄԳ) վերաիմաստավորումը ժամանակակից տնտեսության ձևավորման, արտադրության գլոբալացման հետևանքն ու տրամաբանական շարունակությունն է: Պետություն - առևտրային կազմակերպություն գործընկերության հիմնական նպատակն է՝ ընդլայնել կապիտալների ազատ շարժը և հնարավոր դարձնել մասնավոր կապիտալի ներթափանցումը այնպիսի ոլորտներ, որտեղ նախկինում անհնար էր դրա գոյությունը, ինչպես նաև ազգային ու միջազգային մակարդակով ապահովել նշանակալի ծրագրերի

իրագործումը՝ սկսած արդյունաբերության ռազմավարական ճյուղերից մինչև հանրային ծառայությունների մատուցման բնագավառը:

Պետություն - մասնավոր հատվածի գործընկերության համակարգը խառը տնտեսության տարրերից մեկն է, որը հանդես է գալիս որոշակի ինստիտուցիոնալ միջավայրի և հարաբերությունների կառուցվածքի տեսքով և ներառում է բազմաթիվ գործունեության տեսակներ:

Պետություն - մասնավոր հատված գործընկերության ոլորտում կարևորվում են մի շարք տեսական հարցեր: Առաջինը վերաբերում է պետության և սոցիալական խավերի միջև հարաբերություններին: Երկրորդը՝ տնտեսության մեջ պետության դերի, տնտեսական գործընթացներում պետական միջամտության ընդունելի չափերի և դրա սահմանների մասին է: Երրորդ կարևորագույն հարցը ծագում է ապապետականացման գործընթացի շուրջ, որի ժամանակ առաջանում է պետության և մասնավոր հատվածի համագործակցության ձևերի ընտրության հարցը:

Վերջին երեք տասնամյակում բազմաթիվ երկրներում անցկացվեցին տնտեսությունների ազատականացման միջոցառումներ, աստիճանաբար փոքրացվեց պետության դերակատարումը նյութական և ոչ նյութական արտադրության ոլորտներում և կապիտալի ձևավորման գործընթացում: Սակայն պետության և մասնավոր հատվածի գործընկերության լայնորեն կիրառվող պրակտիկան վկայում է, որ պետությունը, թեև անուղղակիորեն, մասնակցում է շահույթի ձևավորման գործընթացում: Ինչ չափով պետությունը կարող է գործընկերությունների միջոցով կառավարել տնտեսությունը, կարող է արդյո՞ք այն չեզոք մնալ մասնավոր տնտեսությանը միջամտելուց և պահպանել իր վերահսկողական դերը տնտեսավարման մեխանիզմում:

Ի տարբերություն այսպես կոչված «լրիվ» մասնավորեցման ձևերի, ՊՄԳ ընդունված պրակտիկան չի նախատեսում պետական սեփականության իրավունքի փոխանցում մասնավոր հատվածին: Եվրամիության, ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Ավստրալիայի և մի շարք այլ երկրների օրենսդրության համապատասխան մասնավոր հատվածը իրացնում է միայն պետության կողմից պատվիրակված օգտագործման և տիրապետման իրավունքները և միայն որոշ պայմանների առկայության դեպքում՝ նաև սեփականության տնօրինման լիազորությունները: Աշխարհի մասշտաբով մասնավորեցման և կիսա-մասնավորեցման գործարքները բաշխվում են մոտավորապես հավասարաչափ, սակայն ակտիվների արժեքի տեսանկյունից մասնավորեցման այլընտրանքային ձևերը գերակայում են, հաշվի առնելով, որ դրանք իրականացվում են հիմնականում ենթակառուցվածքների և սոցիալական ոլորտներում:

Թեև 2019 թվականի հունիսի 28-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-113-Ն), սակայն պետք է

նշել, որ օրենքով սահմանված ընթացակարգերով և օրենքի գլուխ 2-ով («Պետություն-մասնավոր գործընկերության ոլորտի մարմինները») նախատեսված մարմինների մասնակցությամբ Հայաստանում ՊՄԳ ծրագրեր դեռևս չեն իրականացվել: Դրա պատճառներից են՝ 1) օրենքը համեմատաբար նոր է ընդունվել և դրա կիրառման գործիքակազմը դեռևս մշակված չէ, 2) օրենքով նախատեսված ընթացակարգերը շատ բարդացված են, բավականաչափ բյուրոկրատացված ու խճճված և պահանջում են հստակ, կոշտ վարչարարություն, 3) ըստ էության, պետական կառավարման մարմինների աշխատակազմերում ներգրավված չեն այնպիսի մասնագետներ, որոնք կգնահատեն ՊՄԳ ծրագրերի բոլոր ռիսկերը և եզրակացություններ կտան դրանց իրականացման (այդ թվում՝ արդյունավետության) մասին, 4) թեև վերջին 2-3 տարիների ընթացքում շատ է խոսվում ՊՄԳ ծրագրերի անհրաժեշտության մասին, սակայն դրանք առավել արդյունավետությամբ իրականացվել են մինչև օրենքի ընդունումը՝ նախկինում գոյություն ունեցող կարգավորումների շրջանակում:

Վերը նշված հիմնախնդիրների լուծումներն, անկասկած, պահանջում են երևույթի հիմքերի համալիր հետազոտություն, այդ նպատակով տնտեսության և նրա առանձին ոլորտներում վարվող քաղաքականության ծրագրային մոտեցումների վերլուծություն, ինչպես նաև համապատասխան լուծումների առաջադրում: Ատենախոսությունը նվիրված է Հայաստանում պետություն և մասնավոր գործընկերություն արդյունավետ մեխանիզմների ձևավորմանը, ինչով էլ պայմանավորված է հետազոտության թեմայի արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսի կողմից աշխատության ընտրված նպատակն է՝ մշակել ՀՀ-ում ՊՄԳ-ի պետական կարգավորման բարելավման ուղիներն ու դրանց կառուցակարգերը, միջազգային պրակտիկայում ՊՄԳ ծրագրերում կիրառվող կազմակերպական և ֆինանսավորման առաջադեմ սխեմաների և դրանց կառուցակարգերի տեղայնացման մոտեցումները, ՊՄԳ ծրագրերի ներդրումային կայուն պլատֆորմի ձևավորման գործիքակազմ՝ ուղղված ՊՄԳ համապետական և տարածաշրջանային ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել ՊՄԳ-ի տեսամեթոդական հիմքերը և միջազգային զարգացումները,
- բացահայտել ՊՄԳ-ի ձևավորման հայեցակարգային և տեսամեթոդական մոտցումներն ու սկզբունքները,

- բացահայտել միջազգային պրակտիկայում ՊՄԳ-ի օրենսդրական կարգավորման մոտեցումները և ծրագրերի իրականացման տարատեսակները,
- ներկայացնել ՊՄԳ տարածաշրջանային ծրագերի ֆինանսավորման ինովացիոն փորձը Չինաստանում,
- վերլուծել ՀՀ-ում իրականացված ՊՄԳ ծրագրերը և դրանց ընդհանուր բնութագրիչները,
- վերլուծել ՀՀ-ում ՊՄԳ իրավակարգավորման վիճակը, իրականացված ոլորտային ՊՄԳ ծրագրերի հիմնական ձևաչափերը և առանձնահատկությունները,
- մշակել ՀՀ-ում ՊՄԳ կենսունակ ծրագրերի զարգացման հիմնական առանցքները և կառուցակարգերը, ներառյալ օրենսդրական հիմնախնդիրների կարգավորման մոտեցումները և ուղիները,
- մշակել ՊՄԳ կազմակերպական և ֆինանսավորման սխեմաների տեղայնացումն ու ակտիվացման առանցքները ՀՀ տարածաշրջանային ծրագրերի համար,
- մշակել ՊՄԳ ծրագրերի կառուցվածքային ֆինանսավորման կառուցակարգերի ներդրման ուղիները,
- մշակել կառուցվածքային ֆինանսավորմամբ իրականացվող ՊՄԳ ծրագրերի գնահատման գործիքակազմը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ուսումնասիրության արդյունքում ստացվել են գիտա-գործնական նշանակություն ունեցող արդյունքներ, որոնց գիտական նորույթը կայանում են հետևյալում՝

- մշակվել են ՀՀ ՊՄԳ օրենքում բացահայտված խնդրահարույց հարցերի լուծումները, կապված՝ ա) մասնավոր գործընկերոջ կարգավիճակի, ծրագիրն իրականացնող կառույցում օտարերկրյա մասնակցության, ծրագիրը իրականացնող ընկերության ձախողման դեպքում մասնավոր և պետական գործընկերների միջև ռիսկերի բաշխման, բ) ԵԱՏՄ անդամ երկրների ՊՄԳ օրենսդրություններում բացահայտված՝ միասնական տնտեսական տարածքում կապիտալի կամ ներդրումների ազատ տեղաշարժի «սահմանափակում» որակված իրավական կարգավորման մոտեցման հետ,
- մշակվել է ՊՄԳ ծրագրերի կազմակերպական և ֆինանսավորման կառուցվածքները տեղայնացնելու աշխատանքների ակտիվացման հիմնական չափորոշիչներն ու կառուցակարգերը՝ տարածաշրջանային, միջհամայնքային և համայնքային (ՏՀՄ) միավորների մակարդակով,
- մշակվել է ՀՀ-ում ՊՄԳ ծրագրերի ֆինանսավորման և ներդրումային կայուն պլատֆորմի հայեցակարգն ու դրա մոտեցումները ուղղված՝ ակտիվների արժեթղթավորման կառուցակարգով կապիտալ ներդրումների համար անհրաժաշտ միջոցների ներգրավմանը,

սահմանվել են արժեթղթավորման փուլի բազային ակտիվների չափորոշիչները, ակտիվներով ապահովված արժեթղթերի արդյունավետ սպասարկման մոտեցումներն ու կառուցակարգերը,

➢ մշակվել է ցուցանիշների համախումբ՝ որով գնահատվում է ՊՄԳ ծրագիր իրականացնող ընկերության ֆինանսական վիճակի կամ «կենսունակության» փոփոխությունը, կապված՝ ակտիվների արժեթղթավորմամբ ռեսուրսների ներգրավման միջոցով կապիտալ ծախսեր իրականացնելու ներուժի հետ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ ստացված արդյունքներն ու եզրակացությունները կարող են կիրառվել ՀՀ-ում ՊՄԳ հիմքով տնտեսության ենթակառուցվածքային ոլորտների զարգացման քաղաքականության մշակման, այդ ոլորտում մրցունակության և արդյունավետության գործիքակազմի սահմանման համար: Դրանք կարող են հիմք հանդիսանալ ՀՀ-ում ՊՄԳ ծրագրերին համապատասխան պետական աջակցության արդյունավետ գործիքների մշակման և կիրառման համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները, տրված են հետազոտության առարկան և օբյեկտը, ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին՝ «Պետական մասնավոր գործընկերության տեսամեթոդական հիմքերը և միջազգային զարգացումները» գլխում ներկայացվել են ՊՄԳ ձևավորման հայեցակարգային տեսամեթոդական մոտցումներն ու սկզբունքները: Հեղինակը դիտարկել է միջազգայն պրակտիկայում պետական-մասնավոր գործընկերություն օրենսդրական կարգավորման մոտեցումները և ծրագրերի իրականացման տարատեսակները, անդրադարձել է նաև պետական-մասնավոր գործընկերություն տարածաշրջանային ծրագրերի ֆինանսավորման չինաստանյան փորձին:

Ատենախոսության երկրորդ՝ «ՊՄԳ ծրագրերի արդի վիճակը, ներուժը և իրավակարգավորումը ՀՀ-ում» գլխում հեղինակի կողմից ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում իրականացված ՊՄԳ ծրագրերի և դրանց ընդհանուր բնութագրիչների ուսումնասիրությունը, դիտարկվել է պետություն–մասնավոր

գործընկերություն իրավակարգավորման էությունը և պրակտիկան ՀՀ-ում: Աշխատության այս մասում հեղինակը ամփոփել է մինչ օրս Հայաստանում իրականացված ոլորտային ՊՄԳ ծրագրերը, ուսումնասիրել է դրանց ձևաչափերը և հիմնական առանձնահատկությունները:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ-ում ՊՄԳ կենսունակ ծրագրերի զարգացման հիմնական առանցքները և կառուցակարգերը» գլխում ներկայացվել են պետություն-մասնավոր գործընկերության օրենսդրական հիմնախնդիրների կարգավորման հեղինակի մոտեցումները և հիմնական ուղղությունները, ՊՄԳ կազմակերպական և ֆինանսավորման սխեմաների տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում տարածաշրջանային ծրագրերի համար, դիտարկվել են ՊՄԳ ծրագրերի կառուցվածքային ֆինանսավորման կառուցակարգերի ներդրման ուղիները, ինչպես նաև ներկայացվել է կառուցվածքային ֆինանսավորմամբ իրականացվող ՊՄԳ ծրագրերի գնահատման գործիքակազմը:

Եզրակացությունների բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքում բացահայտված հիմնախնդիրները, ստացված արդյունքները և ներկայացված են ուսումնասիրության արդյունքում բացահայտված խնդիրների լուծման ուղղությամբ հեղինակի առաջարկությունները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ատենախոսության «1.3. Պետական-մասնավոր գործընկերություն տարածաշրջանային ծրագրերի ֆինանսավորման ինովացիոն փորձը Չինաստանում» ենթագլխում (էջեր 31-43) հեղինակը մանրամասն քննարկել է Չինաստանի տարբեր նահանգներում պետություն–մասնավոր գործընկերության վերջին տարիների փորձը, որը ներառում է գործարքների քանակի, ներդրումների ծավալի, կիրառվող կառուցակարգերի վերլուծությունը: Սակայն կատարված հետազոտությունը իր հետագա տեղայնացումը չի ստացել ատենախոսության հաջորդ գլուխներում և, հատկապես, համապատասխան հետևություններ չեն արվել «Եզրակացություններ» բաժնում: Նման մոտեցման պարագայում ստացվում է, որ պետություն–մասնավոր գործընկերության չինական փորձի ուսումնասիրությունը դարձել է ինքնանպատակ և մնացել է «օդում կախված»:

2. Ատենախոսության «3.2. ՊՄԳ կազմակերպական և ֆինանսավորման սխեմաների տեղայնացումն ու ակտիվացման առանցքները ՀՀ տարածաշրջանային ծրագրերի համար» ենթագլխում (էջ 111-128) ատենախոսը անդրադարձել է ՀՀ-ում ՊՄԳ-ի կազմակերպական և ֆինանսավորման սխեմաների տեղայնացման անհրաժեշտությանը՝ տարածաշրջանային, միջհամայնքային և համայնքային (խոշորացված համայնքների) միավորների (ՏՄՀ) մակարդակով: Սակայն հեղինակը չի կոնկրետացնում ՊՄԳ առաջնային այն ոլորտները, որտեղ համայնքները կարող են նման համագործակցության համար հանդես բերել նախաձեռնություն և շահագրգռվածություն, այդպիսով ավելի գրավիչ և

տնտեսապես արդարացված դարձնելով պետություն-մասնավոր հատված գործընկերությունը: Ասվածը կարևորվում է նաև նրանով, որ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի ընդունմանը զուգահեռ 2019 թվականի հունիսի 28-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-116-Ն), որով այդ օրենքի հոդված 86-ը լրացվեց առանձին դրույթով, համաձայն որի համայնքի եկամուտներ են համարվում. «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ՊՄԳ ծրագրի շրջանակներում առաջացած ֆինանսական միջոցները, եթե ՊՄԳ ծրագիրը նախատեսում է համայնքի համար նման միջոցների առաջացում.»:

Ատենախոսության այս մասում հեղինակը ընդհանրապես չի անդրադարձել ՏԻՄ օրենսդրությանը՝ բացահայտելու համար նախ՝ համայնքային և միջհամայնքային հարթությունում ՊՄԳ ծրագրերի իրականացման մոտիվացիան, որից հետո նոր՝ կիրառելի գործիքակազմը:

3. Ատենախոսության յուրաքանչյուր ենթագլխի վերջում բացակայում է հեղինակային ամփոփումը, որտեղ պետք է արտացոլվեն այդ ենթագլխին բնորոշ էական բացահայտումները և/կամ հիմնախնդիրները:

4. Ատենախոսության «Օգտագործված գրականության ցանկ»-ը ձևավորվել է անփույթ ձևով: Ցանկում կան բազմաթիվ կրկնություններ, օրինակ գրականության ցանկի 1-ին, 3-րդ, 10-րդ և 15-րդ աղբյուրները նույնն են, տվյալ աղբյուրը գրականության ցանկում կրկնվում է չորս անգամ: Նույնը վերաբերում է գրականության ցանկի 30-րդ, 31-րդ և 32-րդ աղբյուրներին, որտեղ նույն աղբյուրը կրկնվում է երեք անգամ:

Բացի այդ, գրականության ցանկում չեն ներառվել աղբյուրներ, որոնք օգտագործվել են ատենախոսության հիմնական տեքստում: Մասնավորապես, «Օգտագործված գրականության ցանկ»-ում ներառված չէ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 28.06.2019թ., ՀՕ-113-Ն), թեև ատենախոսության տեքստում կատարված է օրենքի դրույթների քննադատական վերլուծություն և ներկայացված են օրենքի բարելավման ուղղությամբ առաջարկություններ: Ցանկում տեղ չի գտել Ա. Խ. Մարկոսյանի, Է. Ն. Մաթևոսյանի «Պետություն – մասնավոր հատված գործընկերության հիմնահարցերը» ուսումնա-մեթոդական ձեռնարկը (Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2018, 232 էջ), որին հղում է կատարվում 8-րդ և 21-րդ տողատակում՝ այն էլ սխալ վերտառությամբ: Գրականության 58-րդ աղբյուրը գրված է կիսատ: Այլ օրինակներ ևս կան:

5. Ատենախոսությունում առկա են տեխնիկական բացթողումներ և վրիպակներ, որոնց առաձին-առանձին անդրադառնալը նպատակահարմար չենք համարում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության վերաբերյալ կատարված դիտողությունները, ընդհանուր առմամբ, չեն նսեմացնում հետազոտության գիտական արժեքը, և չեն նվազեցնում հետազոտության արդյունքների տեսական ու կիրառական նշանակությունը:

Գոռ Տիգրանի Սարգսյանի «Պետական-մասնավոր գործընկերության արդյունավետ մեխանիզմների ձևավորումը (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն կատարված, հետազոտական արժեք ունեցող աշխատանք է:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են հեղինակի 7 (յոթ) գիտական հոդվածում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Գոռ Տիգրանի Սարգսյանի «Պետական-մասնավոր գործընկերության արդյունավետ մեխանիզմների ձևավորումը (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02. - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Նորարարության տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ա.Խ.Մարկոսյան**

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Նորարարության տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու **Է.Ն.Մաթևոսյան**

ԵՊՀ գիտական քարտուղար, պատմական գիտ. թեկնածու, դոցենտ **Լ.Ս.Հովսեփյան**